ՄԶՄԿ
ICHD
Մարդկային զարգացման միջազգային կենտրոն
International Center for Human Development

ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՐԵՒԱՆՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ. ԹՂԹԻԿ ԱՆՑՆԵԼՈՎ ԳՈՐԾԻ

19 Մայաթ Նովա, Երեւան
Հեռ.՝ +37410 58-26-38, Ֆաքս՝ +37410 52-70-82, Էլ.փոստ՝ mail@ichd.org, Ինտերնետ էջ՝ www.ichd.org

Ս.թ. մայիսի 3-ին Երևանում տեղի ունեցավ Եվրոպական հարևանության քաղաքականության Գործողությունների ծրագրի (ԵՀՔ ԳՇ) շուրջ ՀՀ և ԵՄ բանակցությունների երրորդ փուլը: Հայաստանի պատվիրակության անդամների կարծիքով այս փուլով գուցե հնարավոր լինի ավարտել ամբողջ գործընթացը, քանզի չեն մնացել հարցեր, որոնց հնարավոր չի լինի հետամուտ լինել և չլուծել: Ներկայում լուծումներ են ստացել լրացուցիչ քննարկումներ պահանջող այն խնդիրները, որոնք մնացել էին բանակցությունների երկրորդ փուլից հետո:

Եվ այսպես, վերջնամշակման և հաստատման փուլ է մտնում մի փաստաթուղթ, որով Հայաստանը մոտակա 5 տարիների համար ստանձնում է հստակ պարտավորվածություն հասարակական կյանքի գրեթե բոլոր ոլորտների առնչվող կարևորագույն հարցերում ուղղորդվել եվրաչափանիշներով և իրականացնել այնպիսի բարեփոխումներ, որոնք Հայաստանը կմոտեցնեն Եվրոպային կամ, ավելի շուտ, հանրային կյանքի խաղի կանոնները կհամապատասխանեցնեն եվրոպականին:

Հայաստանը մաս է Եվրոպայի՝ փաստորեն սա ամենաբարձր քաղաքական հայտարարության տեսքով արդեն հստակ ամրագրված քաղաքական իրողություն է: Իսկ սա իրապես լուրջ է ու նկատելիորեն փոխում է Հայաստանի Հանրապետության տեղը երկրների՝ միջազգային արժեքային համակարգում:

Համագործակցության հաջողված օրինակ

ԵՀՔ ԳՇ շուրջ քննարկումները բավականին տևական էին: Ելնելով բանակցությունների ոչ հրապարակային բնույթից՝ դրանց մանրամասները և անգամ բուն քննարկվող փաստաթուղթը գաղտնի էին պահվում հանրությունից: Այնուամենայնիվ, այս գործընթացի շրջանակներում ՀՀ ԱԳՆ համագործակցությունը հասարակական հատվածի հետ իսկապես արդյունավետ պիտի համարել: Դժվար է ասել, թե որքանով օգտակար եղան հասարակական կազմակերպությունների կողմից բարձրացված հարցադրումներն ու արված առաջարկությունները բանակցություններին մասնակցող հայկական պատվիրակության համար, սակայն մի բան ակնհայտ է. առկա սահմանափակումների պայմաններում ցուցադրելով համագործակցելու անկեղծ պատրաստակամություն՝ դեռևս բանակցային փուլում ՀՀ արտաքին քաղաքականությունն իրականացնող գերատեսչությունն ի դեմս հասարակական կազմակերպությունների ձեռք բերեց ԵՀՔ ԳՇ իրականացման ակնկալվող գործընթացում պատրաստակամ գործընկերներ: Սա իսկապես ձեռքբերում է, ինչն իր պտուղները դեռ ապագայում է տալու:

ԵՀՔ ԳՇ իրականացման մարտահրավերները

Այպիսով, ԵՀՔ ԳՇ-ն արտաքին քաղաքականության հարթությունից տեղափոխվում է ներքին քաղաքականության հարթություն: Հայաստան - Եվրամիություն *արտաքին, փակ,* սկզբունքային բանակցություններն ավարտվում են՝ ազդարարելով *ներքին*, *բաց* բանակցությունների իրականացման անհրաժեշտությունը: Հարցականը մեկն է, արդյո՞ք նույնքան *սկզբունքային* կլինեն ներքին բանակցություններն ու նույնչափ *հետևողական*՝ դրանց հանդեպ մոտեցումը:

Նախ, ակնհայտ է, որ հասունացել է պահը հանրության հետ լուրջ ու համակարգված աշխատանքի, որպեսզի հնարավոր լինի հասնել այն բանին, որ ի դեմս մեր հասարակության ձևավորենք եվրաինտեգրման կարևորագույն գործընթացի համոզված հետևորդ և հզոր հենարան:

Երկրորդ, հասցեական աշխատանքի կարիք է առաջանալու նաև այն ինստիտուտների ու իրողությունների շուրջ, որոնք, չվերափոխվելու դեպքում, ակնհայտորեն խոչընդոտելու են ԵՀՔ ԳԾ իրականացմանը: Այդպիսիք մեզանում քիչ չեն և դրանց մասին անընդհատ խոսվում է գրեթե բոլոր ատյաններում և ամբիոններից. անառողջ մրցակցություն, ոչ լիարժեք ընտրություններ, կոռուպցիա և այլն: Այստեղ ավելանում են նաև անգործությունը կամ անարդյունավետ գործունեությունն այն բոլոր ինստիտուտների, որոնք կոչված են ապահովել (նպաստել) Հայաստանում ժողովրդավարության ու ազատ մրցակցային տնտեսության կայացումը: Թեպետ ԵՀՔ ԳԾ-ն կլինի Հայաստանի կողմից ստորագրված փաստաթուղթ, դա դեռ չի նշանակում, որ ներքին բոլոր դերակատարներն անվերապահորեն կընդունեն այն: Այն դեռ պետք է *ներքին* բանակցությունների փուլով անցնի և համընդունելի դառնա:

Ո՛չ Եվրամիության հետ բանակցող հայկական թիմը և ո՛չ էլ ՀՀ կառավարությունն է այն մարմինը, որ ԵՀՔ ԳԾ-ի սեփականատերն ու առաջ տանողն է լինելու (ներքին բանակցողը): Ամրագրված դրույթները բխում են Հայաստանի շահերից և այդ դրույթներին կողմնակից ցանկացած ուժ իր լուման պիտի ունենա այս գործում: Այս առումով կարևորվում է *բաց*, թափանցիկ գործընթացի ապահովումը, որտեղ կրկին էական դերակատարում կարող են ունենալ մամուլն ու հասարակական կազմակերպությունները:

Անհատական, հատվածական շահերը միշտ բերելու են կրկնակի ստանդարտների և տուժողը լինելու է ընդհանուր շահը՝ Հայաստանի շահը: Որդեգրել ծրագրի իրականացման *սկզբունքային* մոտեցում նշանակում է չգնալ զիջումների, չփորձել իմիտացիոն ներկայացումների գնալ, չենթարկվել ճնշումների՝ հասարակության նեղ հատվածը ներկայացնող ուժերի շահերը չգերադասել ամրագրված ընդհանուր կանոններին: Սա, թերևս, սկսված գործընթացի ամենադժվար մասն է լինելու:

Համառոտագիրը մշակվել է ՄԶՄԿ 2006թ-ի մայիսի 17-ին կայացած՝ «ԵՀՔ ԳԾ բանակցությունների երրորդ փուլը» վերնագրով քննարկման մասնակիցների կողմից արտահայտված կարծիքների հիման վրա: Կլոր սեղանին մասնակցում էին անկախ վերլուծաբաններ, պետական պաշտոնյաներ, միջազգային կառույցների ներկայացուցիչներ:

Քննարկումը կազմակերպվել էր Մեծ Բրիտանիայի Միջազգային զարգացման դեպարտամենտի աջակցությամբ: